

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ

(Շար.)

ԻՆՉՊԷՍ ՕԳՆԵԼ ՈՍԿՈՐՆԵՐՈՒ ԲԵԿՄԱՆ ՊԱՐԱԳԱՑԻՆ

Շատ կարեւոր է դիտնալ թէ ի՞նչպէս պէտք է օգնել, երբ մարդու մը ոսկորներէն մէկը կոտրած է:

Ոսկորը կը կոտրի ուժգին հարուածէ մը, օրինակ՝ ձիուն աքացիէն, կամ բարձրութենէ մը անկումի պահուն, կամ ատրճանակի գնդակով: Ընդհանրապէս կը կոտրին ձեռքի և ոտքի երկար ոսկորները: Կոտրած ձեռքը կամ ոտքը կը ստանայ անկանոն ձեւ մը եւ մարդ չի կրնար աշխատիլ այդ կոտրած անդամով: Եթէ փորձէ շարժել, կը լսուի կոտրած ոսկորներուն չթչթոցը, իսկ հիւանդը կը զգայ սաստիկ ցաւեր:

Կան գոց բեկումներ, երբ մորթին վրայ վէրք բացուած չէ՝ Սակայն երբ ոտքն ու ձեռքը վիրաւորուած են դուրսէն, և ոսկորներուն ծայրերը դուրս են ելած վէրքէն, այն ժամանակ կը կոչուի բաց բեկում:

Մենք արդէն սորվեցանք թէ բաց վէրքին մէջ կրնան իյնալ մանրէներ, վարակել վէրքը. ուստի բաց բեկումը աւելի վտանգաւոր է քան՝ գոցը:

Երբ ոսկոր մը կոտրած է, պէտք է մասնաւոր խնամքով մը փոխադրել վիրաւորը, որովհետեւ սաստիկ՝ ցաւեր կը զգայ ան: Ասկէ զատ, ոսկորներուն սուր ծայրերը կրնան փնասել վէրքը չըջապատող փափուկ մասերուն, ինչպէս մորթը, կրնան վիրաւորել մօտէն անցնող զարկերակը և ծանր արիւնահոսութեան մը պատճառ դառնալ: Գոց բեկումի պարագային, հոսած արիւնը չերեւար դուրսէն, և արիւնահոսութիւնը յայտնի կ'ըլլայ միայն այն ատեն, երբ վիրաւորին վիճակը կը ծանրանայ:

Նախ, պէտք է այնպէս ընել որ ձեռքը կամ ոտքը մնայ հանգիստ պառկած, չշարժուի և չօրօրուի: Այդ նպատակով, կոտրած ձեռքին կամ ոտքին վրայ կը կապեն տեսակ մը տախտակ կամ փորակ, որոնք կը կոչուին բեկակալ:

Սակայն, վիրաւոր մը բժշկին մօտ տանելու համար անհրաժեշտ չէ բեկակալ դնել: Այլ, փոխարէն, կարելի է դնել յարմար տախտակ, դաւազան, պայմանով որ այդ առարկան ըլլայ բաւական երկար և բռնէ կոտրուած տեղին մօտակայ երկու յօդերը: Օրինակի համար, երբ ազդոսկրն է կոտրած, տախտակը պէտք է երկարի կրունկէն մինչեւ դօտին: Այսպիսի դէպքերու մէջ, օգնելու ատեն, պէտք է վէրքին շուրջը քսել «իօտ», դադրեցնել արիւնահոսութիւնը, կապ դնել վէրքին վրայ, ինչպէս նկարագրեցինք: Յետոյ՝ ոտքին դուրսէն կապել երկար տախտակ, այնպէս ինչպէս ըսինք, ներսէն կապել ուրիշ տախտակ մը, քիչ մը կարճ, իսկ տախտակներուն տակ, ոտքին ոսկորներուն ցցուած տեղերը դնել բամպակ կամ ուրիշ փափուկ բան մը:

եթէ կոտորած է թեւք, պէտք է զնեւ բեկակալը այնպէս, որ արմուկը մնայ ծալուած: Բեկակալը զնեւու ատեն, կոտորած մասը պէտք է քաշել այնպէս մը, որ կոտորուած ծայրերը մօտենան իրարու: Աւելի լաւ է որ երկու մարդ քաշեն կոտորուած մասի երկու կողմէն, երկու կոտորները իրարու գէմ բերելու համար:

Եթէ գէպքը պատահեցաւ անսպասի մէջ, ուր բեկակալի համար յարմար առարկայ չգտնուիր, կարելի է կապել կոտորած ոտքը առողջ ոտքին, իսկ թեւք՝ մարմինին, և այնպէս հիւանդը տանիլ բժիշկին մօտ:

Այսպիսի առժամանակեայ կապ մը զնեւի յետոյ, անհրաժեշտ է որ հիւանդը շուտով տարուի բժիշկին: Անիկա աւելի ամուր կապ կը զնեւ կոտորուածքին վրայ և կը դրկէ հիւանդանոց, կամ կը սորվեցնէ թէ ի՞նչ պէտք է ընել, մինչև որ ոսկորները փակին իրարու:

Սովորաբար կոտորած ոսկորը կը փակի քանի մը շաբաթէն: Բարակ ոսկորները կը փակին 3—4 շաբաթէն, իսկ ազդրին ոսկորները կրնան 6 շաբաթէն իսկ չփակիլ իրարու: Երիտասարդներու կոտորած ոսկորները, մանաւանդ երախտներունը, աւելի շուտ կը փակին, քան ծերերունը:

Եթէ վէրքը բաց է և վարակուած՝ մանրէով, այն ատեն աւելի ուշ կը փակի:

ԻՆՉՊԷՍ ՕԳՆԵՆԷ ԵՐԲ ՎՆԱՍՈՒԱՅ ԵՆ ՅՕԴԵՐԸ

Երբեմն յօգակապերն ալ կը վնասուին, անյարմար շարժումներ կատարելու, կամ խնայու պարագաներուն մէջ: Ոսկորներու միացման տեղը կը կոչուի յօդ, կամ՝ ինչպէս ժողովուրդը կ'ըսէ, «խաղ», (արմուկ, ծունկ, ևւայլն): Ոսկորները իրարու կը միանան կապերով: Եթէ կապը միայն վնասուած է, բայց չէ պատռուած, այն ատեն կ'ըսուի՝ պրկում: Իսկ եթէ ոսկորին գլուխը դուրս ելած է իր տեղէն, կ'ըսուի թէ յօդը «խախտեր է»: ԅօդին խախտելէն յետոյ, կը տեսնուի որ, մարմինին այդ մասին ձեւը փոխուեր է: Թէ՛ պրկումի և թէ՛ խախտումի պարագային, յօդը շուտով մը կ'ուռի, նոյն տեղին վրայ ու է շարժում ցաւ կը պատճառէ:

Պրկումի և խախտումի պարագային, ամէնէն խելացի օգնութիւնը կ'ըլլայ արկածեալ ձեռքը կամ ոտքը պահել քիչ մը բարձր և հանդիստ վիճակի մէջ: Երբեմն, սակայն, դժուար է որոշել թէ պրկում պատահած է թէ խախտում, ինչպէս քիչ չին այն դէպքերը, երբ զրժուար է որոշել թէ խախտում պատահած է թէ ոսկրաբեկում:

Այս տեսակ դէպքերու մէջ, պէտք է նախ հիւանդին տալ այնպիսի դիրք մը, որ արկածեալ յօդը մնայ հանդիստ, անշարժ և, որքան կարելի է, քիչ ցաւի: Խախտումները պէտք է միայն բժիշկը շուկէ, կամ անոր օգնականը, կամ գոնէ այնպիսի մէկը, որ ծանօթ է ուղղելու մեթոտներուն:

ԻՆՉՊԷՍ ՕԳՆԵՆԷ ՈՒՐԻՇ ԱՐԿԱՅՆԵՐՈՒ ՊԱՐԱԳԱՅԻՆ

Անկումի պահուն, հարուածի մը պարագային, մարդիկ կ'ենթար-

կուին նաեւ տարբեր փնասներու: Երբեմն կը պատահի որ վէրք չկայ, փոքրիկ երակներն են միայն, որ քիչ մը կը փնասուին, մարմինին մէկ տեղը կը կապուտնայ, կ'ուռի. սակայն այս ամէնը կ'անցնի շուտով: Բայց կան դէպքեր, երբ գուրտէն ոչինչ կ'երեւի, իսկ ներսէն կը փնասուի կարեւոր գործարան մը, օրինակ՝ լեարգը, թոքերը, Հիւանդը ուժաթափ կ'ըլլայ, կեանքը վտանգի տակ է: Պատերազմի ժամանակ, թնդանօթի պայթիւններէն, ուժեղ ցնցումէն առաջ կուգան զանազան վտանգաւոր դէպքեր: Այդպիսի հիւանդները պէտք է տանիլ անմիջապէս բժիշկին, իսկ մինչեւ այդ՝ պէտք է հիւանդը հանգիստ վիճակի մէջ դնել, թարմ օդ տալ, բանալ օձիքը և հանել աւելորդ զգեստները: Եթէ հիւանդին դէմքը շատ գունատ է, պէտք է պաղ ջուր սրսկել դէմքին վրայ, պակկեցնել զայն այնպէս մը, որ ոտքերը և մարմինին վարի մասերը ըլլան գլուխէն բարձր. այս նըպատակով կարելի է բան մը դնել մահճակալին ոտքերուն տակ:

(Շարունակելի)

ՆԱԽԱԿԱՏՈՒՓ

Տօքթ. Ա. Ն. ՄԵԶՊՈՒՐԻՆԱՆ (Պօլիս).— Պատահմամբ մեր ձեռքը անցած “Նոր լուր”ի մէկ թիւին մէջ (20 Յունուար 1928), յիշելով “Բուժանք”ի Յունուարի թիւին մէջ լոյս տեսած “Հայ բժշկ. գրականութիւնը 1927ին” յօդուածը, կը գրէք. “... Ի՞նչ մատնուած էին աւանանշանորոգեալ թերթերու, ոչ նուազ աւանանշանորոգեալ յօդուածագիրները...” Եւայլն, Այդ յօդուածին մէջ յիշուած են միայն, ինչպէս նկատել տրուած է ինչ, անցեալ տարուոյ ընթացքին բժշկական յօդուածներ հրատարակած եւ “Բուժանք” ի ղրկուած թերթերու անունները. քանի մը յօդուածագիրներու անուններուն հետ: “Նոր լուր” չենք ստանար, հետեւաբար չէինք կրնար գիտնալ թէ ինչ բժշկական յօդուածներ եւ յօդուածագիրներ երեւցած էին ինչ, ցենք ստանար նաեւ ուրիշ կարգ մը թերթեր, որոնց “Բուժանք” կը ղրկուի կանոնաւորաբար եւ որոնցմէ խնդրած էինք մեզի ղրկել գէ՛ծ իրենց թերթին այն թիւերը, որոնք բժշկական յօդուածներ կը պարունակեն, որպէսզի կարենայինք պատրաստել Դայ բժշկ. գրականութեան մասին տարեկան ամբողջական տեսութիւն մը: Այս պատճառով ալ, անկատար եղաւ ան, եւ հակառակ մեր կամքին ու “գիտութիւնն ու բժշկութիւնը ամէն հոսանքէ վեր բունելու մեր բընաբանին” ինչպէս կը գրէք, ստիպուեցանք յիշել միայն քանի մը եւ ոչ “աւանանշանորոգեալ” թերթերու եւ յօդուածագիրներու անունները:

Այս առթիւ, ուրախութեամբ կը յիշենք Թէոդիկի “Ամէնուն Տարեցոյց”ին մէջ մեղրի եւ մեղրաբուժութեան մասին ձեր հրատարակած յոյժ շահեկան ուսումնասիրութիւնը, եւ մամուլի մէկ մասին ուշադրութեան կը յանձնենք փոխանակութեան տարրական սովորութիւնը...

ԽՄԲ.